



Ծ Ի Ա Ծ Ա Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԹԵՄԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՅ.

ՄԱՅԻՍ

1863 ԱՄԻ.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Առաջնորդական Ատենիս շրջա-
բերականովը ծանուցուեցաւ
ամենայն երէցփոխանաց եկե-
ղեցեաց վիճակիս, թէ ըստ ա-
ռաջարկութեան վսեմափայլ Ոս-
տիկանին ներքին Գործոց՝ այսուհե-
տեւ եկեղեցիներուն տարեկան ե-
կամուտները ինչ կանոններով պէտք է յու-
ղարկուին Կայսերական Դրամատունը ի շա-
հեցողութիւն:

Ապրիլի 10. — Ըստ խնդրոյ Գեր. Տեղակալի
Առաջնորդութեան վիճակիս, եւ ըստ առա-
ջարկութեան վսեմափայլ Ոստիկանին ներ-

քին Գործոց, վեչսփԱՌ ԿԱՅՄԱՐՆ Բարեհաճե-
ցաւ վարձատրել հետագայ անձինքը՝ նոցա
բազմամեայ հաւատարիմ եւ ջերմեռանդ-
ծառայութեանցը համար յօգուտ եւ ի պայ-
ծառութիւն եկեղեցեաց վիճակիս.

Ա. Նախիջեւանի Ս. Գէորգ եկեղեցւոյն
երէցփոխան՝ Ա. Կարգի վաճառական Աղա
Մատթէոսի երէցփոխեանց շնորհեցաւ ոսկի
մետալ՝ Անդրէասեան Ժապաւինի վրայ:

Բ. Եւպատորիոյ Ս. Նիկողայոս եկեղեցւոյն
երէցփոխան Աղա Յովսեփայ Նզիազարեան
Մուրատեանց՝ նոյնպէս ոսկի մետալ՝ առանց
Ժապաւինի:

Գ. Օտեսսայի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ երէցփոխան Աղա Եղիայի Գրքմէան՝ արծրթէ մետալ՝ Ստանիսլաւեան ժապաւինի վրայ:

Դ. Ագ. քիրմանի Ս. Աստուածածին եկեղեցւոյն երէցփոխան Աղա Կարապետի Աւագեան՝ նոյնպէս:

Ե. Հին Խրիմու Ս. Խաչ վանքի այգւոյն Գործակալ Աղա Պողոսի Մաղլումեան՝ արծրթէ մետալ՝ Ստանիսլաւեան ժապաւինի վրայ՝ ճարմանդով դրուելու:

Ապրիլի 12. — Կայսերական Հրամանաւ, եւ կարգադրութեամբ Ոստիկանարանին ներքին Գործոց՝ ըստ առաջարկութեան Ընդհանուր Կուսակալին նորոյն Ռուսիոյ եւ Պետարապոյ, վիճակիս Համար Վեհափառ Կաթողիկոսին կողմանէ նշանակուած ու արդէն սկսուած վերազննութիւնը դադարեցաւ ու վերջացաւ, եւ անոր տեղը Յանձնաժողով մը որոշուեցաւ որ այն վերազննութեան հետեւանքները քննէ՝ ներկայութեամբ պատգամաւորի ի կողմանէ Սրբազան Կաթողիկոսին: Այն Յանձնաժողովոյն Գահերէց որոշուած է Համհարզն (գլխիկ-սեկրետար) Կայսեր՝ գնդապետն Քալեւին, եւ անգամք՝ ի կողմանէ Ոստիկանին ներքին Գործոց Խորհրդականն Պետութեան Նազարենքօ, եւ ի կողմանէ Ընդհանուր Կուսակալին Փոխանորդն գնդապետի Տեմարովսքի: Եւ որովհետեւ Յանձնաժողովոյն առաջին գործն էր Թէոգոսիոյ Խալիպեան Ուսումնարանին ընթացքը քննել՝ առանց ներկայութեան պատգամաւորի ի կողմանէ Սրբազան Կաթողիկոսին, այն երկու անգամները հասան Թէոգոսիա Օտեսսային վրայէն ապրիլի 10-ին, եւ Գահերէց գնդապետը Ռոսթովէն ու Նախիջեւանէն անցնելով՝ 14-ին, որք եւ ներկայացան Գեր. Առաջնորդին երկրորդ օրը, երկու անգամ Խալիպեան Ուսումնարանը գնացին քալեցին, ղննեցին, աշակերտաց յառաջագիմութեան եւ ուսումնարանին ընդհանուր եւ մասնաւոր

կառավարութեանը տեղեկացան, եւ ապա նաեւ մուտքն ու ելքը քննելու պարապեցան օրինաւոր ոճով եւ մանրամասն վերահասութեամբ ամենայն պարագայից, որպէս զի տեսնեն թէ ինչ աստիճանի ստուգութիւն կայ այն ամենայն ամբաստանութեանց մէջ որ եղած են մինչեւ ցայժմ այն նորակառոյց ազգային Ուսումնարանին վրայ, եւ ապրիլի 30-ին վերջացնելով իրենց քննութիւնները, երկրորդ օրը ճանապարհ ելան դէպ ի Ռոսթով:

Փետրուարի 19-ին հրատարակուած շրջաբերականը, — ինչպէս որ յայտնի է գրաւոր ու բերանացի վկայութիւններէ, — լիովին հասաւ իւր նպատակին ասով՝ որ վիճակիս բարեպաշտ հաւատացելոց գրեթէ ամենուն սիրտը հանգչեցուց, ստոյգ տեղեկութիւններ տալով նոցա այս միջոցիս վիճակային կառավարութեան մէջ պատահած անցքերուն վրայ, եւ եթէ կային նոցա մէջ այնպիսի բարեմիտ անձինք որ գայթակղեր էին, նոցա միտքն ալ բժշկուեցաւ: Զարմանք չէ որ գտնուեցան նաեւ ոմանք, — եւ գլխաւորապէս այս շփոթութեանց պատճառ եղող եւ գրգռող մարդիկ, — որ այն շրջաբերականին հրատարակուելուն վրայ նեղացան, ինչպէս որ արդէն նեղացեր ու վշտացեր էին՝ իրենց նպատակին չհասածներուն համար. բայց որովհետեւ այսպիսիները իրենց սրտմտութիւնը պարտրկելու մտքով՝ կջանան հասկըցնել պարզամտաց թէ ասոնք յստակուած, յշտուած, մեր ազգին եւ եկեղեցւոյն մէջ քնաւ երբեք չպատահած բաներ են, անօգուտ չեմք համարիր յիշեցնել այնպիսեաց՝ թէ այս անցքերուն գլխաւոր մասը, այսինքն վիճակաւոր Առաջնորդի մը կաթողիկոսական հրամանով ձգուիլն ու անմիջապէս Կայսերական վճռոյ զօրութեամբ իւր պաշտօնին մէջ հաստատ մնալը նոր կամ չտեսնուած բան չէ՝ գժբազդաբար՝ դէթ Նախիջեւանի եւ Պետարապոյի վիճակիս համար: Վասն զի ահա ասկից ինը տարի առաջ նաեւ բարեյիշատակ ներսէս

Կաթուղիկոսը կամեցաւ առնուլ Մատթէոս Սրբազան Արքեպիսկոպոսէն վիճակիս առաջնորդութիւնը — զոր ինքը տուած էր, — սակայն Մեծագոր Կայսրը՝ 1856-ին գրուած Օրէնքին համեմատ՝ հաստատուն պահեց զնա իշխանութեանը մէջ։ Այս խօսքիս հաստատութեանը համար՝ ստիպեալ եմք մէջ բերել (Առաջնորդական Ատենիս Գործերէն հանելով) այն նամակը՝ զոր Մատթէոս Սրբազանը (այժմ՝ Առաջնորդ վիճակին Աստրախանայ) գրած է այն ժամանակը Կոնստանտնուպոլիսին, եւ կարգացողը կրնայ գիւրաւ համեմատել այն անցքը այժմու անցքերուն հետ։

« Ի Լուսաւորչական Հայոց Թեմակալ Առաջնորդէ նոր նախիջեւանայ եւ Բեստարաբիոյ ի Մատթէոս Արքեպիսկոպոսէ

« Վիճակայիս Կոնստանտնուպոլիսի նոր նախիջեւանայ եւ Բեստարաբիոյ

« Յառաջադրուք իւն.

« Նախանգամն գորին գրութեամբ իւրով առաքեալ էր առ իս զօրինակս գրութեանց նորին Վեհափառութեան առ վիճակային Ատենանգ եւ առ նոյն ինքն նախանգամն գորին՝ յաղագս ոչ լսելոյ հրամանաց իմոց եւ ոչ ճանաչելոյ զիս վիճակաւոր Առաջնորդ, զորոց զնոյնպիսի օրինակս առաքեալ էր ի Սինօգն Սրբոյ Էջմիածնի։ Որովհետեւ նորին Վեհափառութեանն կամք եղեն հրապարակաւ անարգել զիս անտանելի սոճովք բանից հանգիստացունելով զանձն իմ յազգի մերում անհարազատ հայրենի եկեղեցւոյ, ես զամենահպատակ բողոք իմ հանդերձ կարեւոր եւ պարզ ծանօթութեամբք զհանգամանաց վիճակաւորութեան իմոյ ի 10-էն նախընթաց Սեպտեմբերի մատուցեալ նորին Կայսերական Մեծութեան ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԵԻԶԻ ԻՆՔՆԱԿԱՆԻ ամենայն Ռուսաց՝ իրնգրեալ էի բանալ զառանձինն գաղափարն ազատ ի կրից, այս է ի մասնակցութեանց ի-

մոց թշնամեաց. յարակցելով թէ զայսպիսի վիճակաւորութիւնն առաւելոյն համարիմ ինձ կրել յանձին իմում, որ աղբիւր է միայն վշտաց եւ նեղութեանց։ Թագաւոր Կայսրն ի վերայ այսր ինդրոյ, Բարձրագոյն բարեհաճեցաւ հրամայել, թողեալ զիս ի պաշտօնի իմում նովին իրաւամբ զորս շնորհեալ էին ինձ Բարձրագոյն ի հաստատութեան իմում, տալ ինձ զհնարս վասն կառավարելոյ զհաւատացեալ ինձ վիճակն ի վերայ հիման Բարձրագոյն հաստատեալ յամի 1856 Կարգադրութեան վասն կառավարութեան գործոց Լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց ի Ռուսաստան։

« Ընդ այսմ առաքեալ ի վիճակային Ատենանգ զհաւատարիմ պատճէն գրութեան Պարոն Նախարարին ներքին Գործոց առ իս ի 1-էն ամսոյս համարաւ 172, եղելոյ Բարձրագոյն կամօք, յառաջագրեմ դմին ունիլ զայն ի հրահանգութեան. այլ եւ առանց իմոյ գիտութեան եւ թոյլատուութեան չառնել ինչ, ոչ հայեցեալ ի ստիպողական գրութիւնս իշխանութեանց եղելոց ոչ ընդ ձեռն իմ։

« Այլ եւ յառաջագրեմ դմին առաջին պօչտիւ հրաման արձակել առ ամենայն ենթագրեալ դմին Հոգեւոր Կառավարութիւնս, ի քահանայս եւ յերէցփոխանս՝ որք ի քաղաքս եւ ի գեօղս Խերսոնի եւ Բեստարաբիոյ նահանգաց, ծանուցանելով զԲարձրագոյն կամաց, հրամայել ճանաչել զինքեանս ենթագրեալ անմիջապէս իմում տեսչութեան՝ որպէս վիճակաւոր Առաջնորդի։

« Կոնստանտնուպոլիսի փոյթ կալցի զանօրէնութենէ իւրմէ յայսմ մասին տալ ինձ զծանօթութիւնս։

« ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՅՈՑ ՄԱՏԹԵՈՍ »:

« Ի 1856 ամի եւ ազգական 1315, ի 11 Հոկտեմբերի։

« Ի Մոսկով քաղաքի ».